

---

---

## ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՈՃԻ ՈՒՐՈՒՅՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

### Օ. Շ. ՊՈՂՈՍՅԱՆ

Վերջին տարիներին գործառական ոճերի և առանձին գիտությունների ենթաոճերի հետազոտությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ նպատակ ունեն պարզելու, թե այս կամ այն գործառական ոճը ձևավորող լեզվական միջոցների կիրառությունը հաղորդակցական առումով որքանով է արդյունավետ: Սույն հոդվածը միտում ունի լրացնելու այս ուսումնասիրությունների շարքը: Անգլերենի առումով գործառական ոճերի ուսումնասիրության վերոբերյալ մոտեցումը ընդունելի է և արդարացված, քանի որ այն բխում է լեզվագիտության բնագավառում տեսության և պրակտիկայի մշտական համաձայնեցման անհրաժեշտությունից: Տվյալ դեպքում տեսության ու պրակտիկայի միասնականության սկզբունքը դրսևորվում է այն բանում, որ գիտական հաղորդակցման գործառական ոճերի ուսումնասիրությունն ինքնանպատակ չէ. այն սերտորեն կապված է կիրառական խնդիրների, այսինքն՝ անգլերենի՝ որպես միջազգային գիտական հաղորդակցման ամենատարածված միջոցի, ուսումնասիրության ու կիրառման պրակտիկայի հետ:

Այս առումով հետաքրքիր է պարզել, թե արդյոք գրականագիտական տեքստերում գոյություն ունի գիտական հաղորդակցման համար անհրաժեշտ լեզվական այն հիմքը, որն արդեն բացահայտվել ու նկարագրվել է լեզվաբանական տեքստերի նյութի հիման վրա: Հարկ է նշել, որ այս հարցադրումը ձևավորվել է այն տպավորությունների ազդեցությամբ, որն ընդհանուր առմամբ թողնում է գրականագիտական շարադրանքն ընթերցողի վրա: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրականագիտական շարադրանքն առաջին հայացքից իր հուզարտահայտչական հագեցվածությամբ այնպիսի տպավորություն է թողնում, որ ընթերցողը հակվում է այն վերագրելու գեղարվեստականի ոլորտին: Մյուս կողմից ակնհայտ է, որ գրականագիտությունը գիտական իմացության այն կարևորագույն բնագավառներից է, որն առաջացել ու ձևավորվել է որպես գիտակարգ բանասիրության երկփեղկման արդյունքում<sup>1</sup>:

Այսպիսով, նախ հարկ է պարզել, թե ինչպես է դրսևորվում գրականագիտական շարադրանքի լեզվատճական յուրօրինակությունը և բացահայտել

---

<sup>1</sup> Տե՛ս **Ս. Ք. Գասպարյան**, Չևի և բովանդակության միասնականությունը բանասիրական մոտեցմամբ, «Բանբեր Երևանի համալսարանի» թիվ 3, 2006, էջ 79-83, **Գ. Օ. Винокур**, Введение в изучение филологических наук. М., 2000, **Р. А. Будагов**, Филология и культура. М., 1980, **М. Верли**, Общее литературоведение. М., 1957:

գիտական արդյունավետ հաղորդակցում ապահովող լեզվական միավորների հնարավոր առկայությունը նրանում: Վերոհիշյալ հարցադրումների պարզաբանումը հնարավորություն կտա առավել ամբողջական ու լիարժեք պատկերացում կազմելու բանասիրության տվյալ ոլորտի համար բնորոշ ոճի մասին ընդհանրապես և անգլիական գրականագիտական ավանդույթում՝ մասնավորապես: Ընդհանուր լեզվական հիմքի բացահայտումը գրականագիտական տեքստերում ևս մեկ անգամ հաստատում է գրականագիտության և լեզվաբանության սերտ ազգակցական կապերի առկայությունը և դրանց ընդհանուր բանասիրական բնույթը:

Լեզվաբանության մեջ գործառական ոճերի տեսության ձևավորման փուլում առաջ է քաշվում այն տեսակետը, թե դեռ վաղ ժամանակներից մարդկանց հաղորդակցման ընթացքում հաղորդակցական նպատակը պայմանավորում է այս կամ այն լեզվապաշարի, հաղորդակցման միջոցների ընտրությունը, որոնք դրա հետևանքով իրենց պատմական զարգացման ընթացքում ավելի են ամրակայվում լեզվի կիրառման սոցիալապես պայմանավորված այս կամ այն ոլորտում<sup>2</sup>:

Գործառական ոճերի սկզբունքային տարբերակումը հիմնված է յուրաքանչյուր գործառական ոճի որոշակի և տվյալ խոսքային հաղորդակցման մեջ ամրակայված լեզվական միջոցների ամբողջության վրա: Ընդ որում, միասնական ընդհանուր գրական լեզվի յուրաքանչյուր գործառական ոճ հանդես է գալիս որպես որոշակի տիպի համակարգային միասնություն, որում ընդհանուր գրական լեզվի բոլոր պաշարները կիրառվում են ինքնատիպ զուգակցումներով: Հստակեցվել են նաև գիտական հաղորդակցման գործառական ոճի և տարբեր գիտությունների ոլորտում կիրառվող առանձին ենթաոճերի զարգացման հիմնական միտումները: Տարբեր ուսումնասիրություններում հաստատվել են դրանցից յուրաքանչյուրին բնորոշ լեզվական պաշարների յուրօրինակությունները, և ընդհանրապես որոշակի համակարգայնություն՝ դրանցից յուրաքանչյուրի ոլորտում<sup>3</sup>:

Լեզվի գործառության հարցում կարևոր է ռուս լեզվաբանների կողմից առաջ քաշված այն դրույթը, որ գրական լեզվում առկա են երկու հիմնական հակադիր ոճեր, այսինքն՝ լայն իմաստով միմյանց են հակադրվում գիտական շարադրանքի ոճը (հաղորդման գործառույթ) և գեղարվեստական ոճը (ներգործման գործառույթ): Կարևոր է հաշվի առնել նաև հաղորդակցման գործառույթի հիմնարար առկայության փաստը լեզվի գործառության բոլոր հնարավոր ոլորտներում:

Գործառական ոճերին հատուկ լեզվական կազմը բացատրվում է ինչպես գիտական մտածողության, գիտական ճանաչողության և իրականության

---

<sup>2</sup> Տե՛ս **В. М. Жирмунский**, Теория литературы. Поэтика. Стилистика. Л., 1977, էջ 23, **Р. А. Будагов**, Литературные языки и языковые стили. М., 1967:

<sup>3</sup> Տե՛ս **М. Н. Кожина**, О речевой системности научного стиля сравнительно с некоторыми другими. Пермь, 1972, **Н. М. Разинкина**, Развитие языка английской научной литературы (Лингвостилистическое исследование). М., 1978, **М. С. Маковская**, Взаимодействие стилей научной и художественной литературы. М., 1990, **С. К. Гаспарян**, Фигура сравнения в функциональном освещении. Ер., 2000:

ընկալման յուրահատկություններից բխող պատճառներով, այնպես էլ սոցիալական գործոններով, որոնք միասին ձևավորում են գործառական ոճերը իրենց պատմական զարգացման ամբողջ ընթացքում<sup>4</sup>:

Ինչպես հայտնի է, գիտական ոճն իր երկարատև զարգացման ընթացքում ձևավորվել է որպես հասարակայնորեն պայմանավորված գործառական ոճ, որի ամենակարևոր հաղորդակցական խնդիրը մարդկային գիտելիքի այս կամ այն ոլորտից այս կամ այն հատուկ տեղեկություն հաղորդելն է, այսինքն՝ այն, ինչն ակադեմիկոս Վ. Վինոգրադովը անվանել է **հաղորդում**<sup>5</sup>: Սրան համապատասխան՝ լեզվական արտահայտության առումով ստեղծվել ու աստիճանաբար ամրակայվել է կանոնների ու հնարների որոշակի համակարգ, որով ձևավորվում է գիտական ոճը՝ սոցիալական ու հաղորդակցական նպատակ իրականացնելու համար<sup>6</sup>: Աստիճանաբար ավելի է խորանում այն պահանջը, որ գիտական տեքստում հաղորդվող տեղեկությունը դառնա ավելի ըմբռնելի, պարզ ու միանշանակ, և հենց այս հատկանիշներն ու գծերն են, որ, ըստ էության, կազմում են տվյալ գործառական ոճը: Գիտական հաղորդակցման բովանդակությունը պայմանավորում է գիտական շարադրանքի ոճի որոշակի ձևավորում, որը լեզվական արտահայտության առումով պետք է ենթարկվի տրամաբանականության օրենքներին: Այս իմաստով գիտական խոսքը, ի տարբերություն գեղարվեստականի, որը գեղագիտական նպատակով ստեղծված խոսք է, ներկայանում է որպես որոշակիորեն ձևավորված համակարգային միասնություն:

Լիովին հիմնավորված պետք է համարել այն տեսակետը, որ գիտական տեղեկություն հաղորդողն ու ընդունողը պետք է տիրապետեն որոշակի ընդհանուր «կոդի»<sup>7</sup>: Այստեղից էլ բխում է այն համոզմունքը, որ գիտական հաղորդակցումը լիովին կարող է գիտակցաբար կարգավորվել մարդու կողմից, ինչն էլ ենթադրում է գիտական ոլորտի հաղորդակցման լեզվական հիմքի կողմնորոշման գիտակցում: Ինչպես ցույց է տալիս ՀՆԼ-ների (հատուկ նպատակների համար լեզուների) ձևավորման ու կատարելագործման ողջ պատմական ընթացքը<sup>8</sup>, գիտական հաղորդակցման «բնական» ընթացքին միջամտելը նպատակ ունի կանոնարկելու գիտական հաղորդակցումը և բարձրացնելու դրա արդյունավետությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գիտական լեզվի վրա ներգործումը օրինաչափ է միայն այն պարագայում, երբ մարդն արդեն տիրապետում է գիտական հաղորդակցման մեխանիզմին լեզվական արտահայտության առումով:

<sup>4</sup> Տե՛ս **В. В. Виноградов**, *Стилистика. Теория поэтической речи. Поэтика*. М., 1963, էջ 130-131:

<sup>5</sup> Տե՛ս **В. В. Виноградов**, *Итоги обсуждения вопросов стилистики // «Вопросы языкознания»*, М., 1955:

<sup>6</sup> Տե՛ս **Р. А. Будагов**, *Литературные языки и языковые стили*. М., 1967:

<sup>7</sup> Տե՛ս **R. Jakobson**, *Linguistics and Poetics // Style in Language*. Sebeok Th.[ed.] Massachusetts, Cambridge, 1975, էջ 350-377, **O. Akhmanova, V. Zadornova**, *Towards Linguopoetic Study of Literary Texts // Law and Language*. Sheffield, 1983, Vol. 3, № 9, էջ 65-69:

<sup>8</sup> Տե՛ս **C. K. Ogden, I.A. Richards**, *The Meaning of Meaning*. London, 1936, էջ 149, **O. Akhmanova, R. Idzelis**, *What is the English We Use? (A Course in Practical Stylistics)*. М., Moscow University Press, 1972 / 2-nd ed. 1978:

Այլ կերպ ասած՝ գիտության լեզվի վրա ակտիվ ներգործության հարցն ըստ էության տեղափոխում է նշանաբանության ոլորտ<sup>9</sup>:

Միաժամանակ, սակայն, անհրաժեշտ է մշտապես նկատի ունենալ, որ լեզվական արտահայտության առումով խոսքի գիտական ոճի պատմականորեն ձևավորված համակարգայնությունը դեռ չի նշանակում, որ գիտական հաղորդակցման ոլորտում իրապես գործող լեզվի նշանայնությունը պետք է հասկանալ բառացիորեն: Այլ կերպ ասած՝ գիտական շարադրանքի գործառական ոճի համակարգայնության հասկացությունը չի ենթադրում ինչ-որ կայուն կադապարայնացում և գիտական շարադրանքի ոճի մեկընդմիջտ սահմանազատում ու բացարձակ տարանջատում միասնական ընդհանուր գրական լեզվի մյուս ոճերից<sup>10</sup>:

Գիտական գործառական ոճի կտրուկ տարանջատումը և այն ընդհանուր գրական լեզվին հակադրելը կհակասեն լեզվական երևույթների դիալեկտիկական հարաբերակցության գաղափարին: Բանն այն է, որ երբ խոսքը բնական մարդկային լեզվի մասին է, հնարավոր չէ լեզուն միանշանակ դիտարկել որպես ինչ-որ նշանագիտական համակարգ: Բնական մարդկային լեզուն չափազանց բարդ ու բազմաշերտ երևույթ է, որը ձևավորվում է հասարակական կյանքի ամենատարբեր կողմերի (հասարակական, մշակութային, պատմական, ազգային, քաղաքական և այլն) միահյուսման շնորհիվ: Բնական մարդկային լեզվի հիմնական օրենքներից մեկը նշանի խախտման մասին օրենքն է՝ նշանակիչի և նշանակյալի միջև բացարձակ համապատասխանության օրենքի խախտումը, որը խոսքում լեզվի իրական գործածության ընթացքում կարող է ընդունել ամենատարբեր ձևեր<sup>11</sup>: Գոյություն ունեն բազմաթիվ գործոններ, որոնք խախտում են գիտական հաղորդակցման համակարգային բնույթը, նրա որոշակի հաստատված կազմը:

Ներկայումս կասկած չի հարուցում այն կարևոր փաստը, որ գիտական ոլորտի հաղորդակցման լեզվի գործառական ոճերից ոչ մեկը, ըստ էության, ոճականորեն լիովին չեզոք չէ. գուրկ չէ հուզարտահայտչականությունից ու լեզվական ստեղծագործությանը բնորոշ տարբեր տեսակի տարրերից, առավել ևս դա վերաբերում է գրականագիտական ու գրաքննադատական ոլորտի տեքստերին:

Լեզվաբանության մեջ հաստատված այն իրողությունը, որ իրական խոսքաստեղծման ընթացքում լեզվի բոլոր պաշարներն ու ոճերը մշտապես գտնվում են դիալեկտիկական փոխհարաբերության մեջ, ըստ էության, հակասում է գիտական հաղորդակցման **համակարգային** բնույթի մասին մեր պատկերացումներին: Սակայն բանն այն է, որ գիտական լեզուն սնվում է միասնական ընդհանուր գրական լեզվի պաշարներից: Ու թեև դրանցից որոշակիորեն առանձնացվում և ընտրվում են գիտական լեզվի հիմնական

<sup>9</sup> Տե՛ս **O. Akhmanova, R. F. Idzelis**, *Linguistics and Semiotics*. M., 1979, էջ 17-18, 76-77:

<sup>10</sup> Տե՛ս **М. Н. Кожина**, *К основаниям функциональной стилистики*. Пермь, 1968, էջ 36:

<sup>11</sup> Տե՛ս **О. С. Ахманова**, *Очерки по общей и русской лексикологии*. М., 2004, էջ 16-23, **Р. А. Будагов**, *Человек и его язык*. М., 1976, **А. И. Смерницкий**, *Объективность существования языка*. М., 1954:

հաղորդակցական խնդրին համապատասխան միավորներ և տվյալ ոլորտում կիրառվում ըստ այդ լեզվի կանոնների<sup>12</sup>, չի բացառվում անհատական ոճական բնույթի դրսևորումների և առնչանակային տարրերի ներթափանցումը գիտական շարադրանք, որն էլ բացատրվում է լեզվի հսկայական ստեղծագործական ներուժով: Չնայած լեզվի ամենակարևոր ու ամենաառաջնային գործառույթը միշտ էլ մնում է հաղորդակցականը, այսինքն՝ լեզուն մարդկանց համար մշտապես և առաջնահերթ ծառայում է որպես հաղորդակցման միջոց, այդուհանդերձ անհրաժեշտ է կարևորել նաև նրա ստեղծագործական դերը:

Գիտական շարադրանքի ոճում հաղորդման գործառույթը նկատելիորեն գերակշռում է: Այդուհանդերձ, ցանկացած ոլորտում, որտեղ մարդկային հաղորդակցումն իրականացվում է լեզվի միջոցով, լեզուն մշտապես և դեռ վաղեմի ժամանակներից հաղորդակցվողների համար եղել ու մնում է ոչ միայն որպես հաղորդակցական, այլև ինքնաարտահայտման միջոց, որպես «կենդանի», զարգացող լեզու<sup>13</sup>: Այս իսկ պատճառով գիտության լեզուն նույնպես չի կարելի պատկերացնել որպես նշանների քարացած համակարգ, որը ծառայում է միայն արտահայտելու հասկացական առումով տրամաբանական բովանդակություն: Ըստ էության, գիտական խոսքից չի կարող իսպառ անհայտանալ հուզաարտահայտչական ու գնահատողական կողմը, ինչը բնութագրական է մարդկային հաղորդակցությանն ընդհանրապես և լեզվով ցանկացած ոլորտում հաղորդակցվելուն մասնավորապես:

Ինչպես նշում է Ռ. Ա. Բուդաղովը, «Լեզուն մշտապես անբաժան է մարդուց, և այն անհնարին է պատկերացնել նրա սուբյեկտիվ դատողություններից ու սուբյեկտիվ ընկալումներից դուրս»<sup>14</sup>: Մարդը գիտական տեղեկություն հաղորդելիս հաճախ ձգտում է արտահայտել ոչ միայն հատուկ տեղեկությունների ամբողջություն, այլև իր վերաբերմունքը հաղորդվող տեղեկության նկատմամբ<sup>15</sup>: Ըստ էության մարդկային լեզուն կմնա որպես ինքնաարտահայտման միջոց այնքան ժամանակ, որքան ժամանակ այն կծառայի հաղորդակցման նպատակին<sup>16</sup>:

Բացի դրանից, հիշատակության է արժանի նաև այն կարևորագույն փաստը, որ իմաստաբանական առումով ճանաչողության, գիտական որոնումների, գիտական մտածողության ընթացքը անխուսափելիորեն կապված է մարդու ստեղծագործական երևակայության, պատկերացման, ներըմբռնման հետ: Այս է պատճառը, որ հաճախ այս կամ այն միտքը շարադրելիս գիտական շարադրանք են ներթափանցում հուզաարտահայտչական, գնահատողական տարրեր<sup>17</sup>:

<sup>12</sup> Տե՛ս **Ք. Ա. Բուդաղով**, *Филология и культура*:

<sup>13</sup> Տե՛ս **Ք. Ա. Բուդաղով**, *Что такое развитие и совершенствование языка?* М., 1977, **Ք. Ա. Բուդաղով**, *Литературные языки и языковые стили*:

<sup>14</sup> **Ք. Ա. Բուդաղով**, *О предмете языкознания*. М., 1972, т. 1, вып. 5, с. 409:

<sup>15</sup> Տե՛ս **Գ. Վ. Կոլշանский**, *О соотношении субъективных и объективных факторов в языке*, М., 1975:

<sup>16</sup> Տե՛ս **Ք. Ա. Բուդաղով**, *Что такое развитие...*:

<sup>17</sup> Տե՛ս **Մ. Н. Կոջина**, *Сопоставительное изучение научного стиля и*

Գիտական հաղորդակցման մեջ արտահայտչականության, գնահատողականության, տարբեր հռետորական հնարների դրսևորումները հաճախ պայմանավորված են գործառական խնդիրներով, այսինքն՝ դրանք կիրառելով՝ գիտական տեղեկություն հաղորդողը երբեմն ձգտում է ներազդել ոչ միայն տեղեկություն ընդունողի գիտակցության, այլև նրա զգացմունքների վրա: Փաստորեն, մարդկային մտածողությունը իրականության և՛ տրամաբանական, և՛ զգայական ճանաչողական ընթացքների միասնություն է: Տեսական առումով դա նշանակում է, որ չնայած գիտական հաղորդակցում իրականացնելիս խոսողը, ըստ էության, գործում է տվյալ ոլորտում լեզվի գործունեության ոճական նորմերին համապատասխան, այդուհանդերձ սուբյեկտիվությունը, գնահատողականությունն ու արտահայտչականությունը հաճախ առկա են գիտական շարադրանքում: Սակայն, ինչպես ցույց են տվել այս ոլորտում կատարված հետազոտությունները, գիտական շարադրանքի լեզվում հուզաարտահայտչական դրսևորումները գիտական շարադրանքի գործառական ոճի որակական փոփոխության չեն հանգեցնում: Գիտական շարադրանքի ոճում և՛ տարբեր անհատական դրսևորումները, և՛ գեղարվեստական տարրերի կիրառումները հասցված են նվազագույնի և ենթարկվում են գիտական հաղորդակցման ամենահիմնական նպատակին, այսինքն՝ ընդհանուր կամ հատուկ գիտական տեղեկություն **հաղորդելուն**: Գիտական ոճում սուբյեկտիվության և գնահատողականության դրսևորումները մշտական բնույթ չեն կրում և գիտական տեքստի բաղկացուցիչ ու անբաժանելի մաս չեն կազմում<sup>18</sup>:

Այդ առումով հետաքրքիր դատողություններ է անում Ս. Բ. Գասպարյանը՝ փաստելով, որ հուզաարտահայտչական ու ներգործող տարրերը, ինչպես, օրինակ, փոխաբերությունը, համեմատությունը, հռետորական հարցը և այլ ոճական այլաբերություններ ու բանադարձումներ, կարող են ոչ միայն համատեղելի լինել գիտական ստեղծագործության ընդհանուր տրամաբանական ուղղվածությանը, այլև երբեմն նույնիսկ հանդես գալ որպես դրա **անհրաժեշտ** տարրեր: Սակայն այստեղ կարևորն այն է, որ գիտական լեզվում այդպիսի տարրերի կիրառումը գեղագիտական ներգործման նպատակ չունի: Լեզվական բարձր կուլտուրայի տիրապետող գիտնականն իր մտքերն արտահայտելիս կամ գիտական հաղորդում կատարելիս որքան էլ փորձի իր խոսքը հնարավորինս անհատականացնել տարբեր դրվագազարդող տարրերի միջոցով, միևնույնն է, ըստ էության, նա չի հասնի առնչանակային ու հուզական տարրերի ներգործող այն արդյունքին, որը բնորոշ է գեղարվեստական խոսքին: Այստեղ առնչանակային տարրերը հիմնականում կարծես զերծ են մնում իրենց առաջնային գոյաբանական գործառույթն իրականացնելուց ու առաջնահերթ ծառայում են ճանաչողական գործառույթի դրսևորմանը: Ուրիշ խոսքով՝ ցանկացած առնչանակային

некоторые тенденции его развития в период научно-технической революции // Язык и стиль научной литературы. М., 1977, էջ 17, **Н. М. Разинкина**, Указ. раб., **П. И. Пахуткин**, Функциональные особенности речевой образности в научном стиле. Автореф. дис. ...канд. филол. наук. М., 1973:

<sup>18</sup> Տե՛ս **Ք. Ա. Будагов**, Филология и культура. М., 1980, **Ն. Հ. Գասպարյան**, Արտոնագրային մասնագրի լեզուն և ոճը: Գիտ. թեկ. սեղմ., Եր., 2005:

երանգավորված, հուզական տարրի կիրառում գիտական խոսքի շրջանակներում ենթարկվում է դրա հաղորդակցական ամենահիմնական դրույթին՝ գիտական փաստեր ու տեղեկություններ հաղորդելուն<sup>19</sup>:

Բոլոր հիմքերը կան եզրակացնելու, որ գիտական ոճի վերը ներկայացված բնութագրի առումով գրականագիտական շարադրանքի ոճը բացառություն չի կազմում, քանի որ վաղուց արդեն լրացուցիչ ապացույցների կարիք չունի այն փաստը, որ գրականագիտությունը գիտական իմացության լիիրավ ոլորտ է, որը, թեև իր գործառնական պատկանելիությամբ, ուսումնասիրության առարկայով և լեզվական արտահայտության ինքնատիպությամբ պայմանավորված, որոշակի տարակուսանք է հարուցում ոճագետների շրջանում, այդուհանդերձ տարաբնույթ գիտակարգերի շարքում իր տեղն ունի որպես բանասիրական գիտելիքի դրսևորման ուրույն բնագավառ:

**Օ. Մ. ПОГОСЯН – *Язык литературоведения как своеобразное проявление научной речи.*** – В статье рассматривается вопрос о стилистических особенностях литературоведческого изложения, способствующих эффективному научному общению. Автор обращает внимание на тот факт, что в литературоведческих текстах тенденция к экспрессивности может носить не только индивидуальный характер, но и являться стилистической чертой данной разновидности речи.

---

<sup>19</sup> Տե՛ս **Ս. Կ. Գասպարյան**, Կ вопросу о взаимодействии функциональных стилей в тембральном освещении // Фил. науки. М., 2007, № 1, էջ 78-83: